ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա՛ է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ. . . . 1 „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Ընկեան ճահիճներ — առ ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի՛ աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 10. ՓԵՏՐՎԱՐ. Nr 10. | 1897 | ՄԻԱՄՍԵԱՅ

ԱՄԻՍԸ

Ընկեալքը կրակի մէջ է. ընդհանուր հրդեհի նախընթաց օր:

Միջերկրականի ծովից դուրս ելան հրսկաների բանակներ: Միջերկրականի ափերից արձագանք տվին նրանց ձայնին դիւցազուններ:

Ողջին իր մօր գիրկն է ուզում. մայրհայրենիքն իր զաւակին պահանջում: Հին Արեւէն եւ հին Յունաստանը հերոսական ոգեւորութեամբ գրկախառնվում են:

Հին Եւրօպան խելագարվել է. հին Եւրօպան ոձրագործ է: Բոլոր վեց Մեծերը, վեցն էլ բռնակալաձնշողներ, անսուրբ միութեամբ անսուրբ արշաւանք են մղել ազատութեան կարօտ փոքր ազգերի դէմ:

Դա բիրտ Ոյժն է, որ կատաղած ուզում է խեղդել Իրաւունքը:

Հին Եւրօպան, անամօթ Եւրօպան ստոր գործադրողն է Կարմիր սուլթանի, արիւնարբու գազանի ամեն քմահաճոյքի: Արա կամքը սուրբ օրէնքն է առաջինի համար:

Դա հին Եւրօպան է, որ մանրացել ու կործանվելու նշաններ է ցոյց տալիս:

Դա հին բռնակալութիւն, նեխած Թիւրքիան է, որ իշխում է նրա վրայ:

Յած սիրահար՝ այդ Եւրօպան՝ մարդասպանութիւն է գործում Հարեմի պոռնիկի սիրոյ համար, ի վերջոյ ինքնասպանութիւն գործելու վտանգի ենթարկելով իրան:

Յած սուլթանը հոգեվարքին հասած՝ իր մինաձգտական վերջին ճիգերն է թափում: Բայց նա մեռնում է, նա կը մեռնէ:

Յած Եւրօպան մտածում, յուզվում ու գործում է վատ սուլթանի փոխարէն, նրա նպաստ եւ նրա համար: Օ՜հ, ինչ փափուկ են հիւրինների բարձերը հանգիստ քնացած սուլթանի գլխի տակ: Ինացեր այլ եւս չը զարթնելու համար:

Յած Եւրօպան իր թնդանօթի ռումբի տակ ազատութեան կարօտ, ազատութեան զինւոր կրետացիներին մսի գնդեր է դարձնում: Կեցցէ՜ Եւրօպա. նա աւելի յած է, քան Կարմիր Դահիճը, որի թնդանօթները վախով են այդ հրաշքները անում:

Եւ դա, սուլթան, հին բռնակալութիւն ու հին Եւրօպա, դա՝ ամբողջ հիններ ու ապականվածներ է, որ կործանվում է:

Ամեն ժողովուրդներ խորին զայրոյթի մէջ են դրանց դէմ:

Ամեն ժողովուրդներ միմեանց հետ միանալու վրայ են յանուն մարդկութեան ոտնակոխ ալած իրաւունքների, յանուն նրա փրկութեան:

Ահա՛ այս ամիսը:

Առա՜ջ, մենամարտիչներ, Հինի և Նորի ջատագովներ:

Պառաւած ծնողը չէ, որ կը կարողանայ երկար ապրել և մանուկը չէ, որ կոչված չը լինի աճելու, ծաղկելու, մեծանալու:

Եւրօպայում մի խորունկ գերեզման է փորվում այժմ. դա Նորի համար չէ: Գերեզմանափորնե՛ր, օ հե՛ն պառաւներ, այդ գերեզմանը սպասո՜ւմ է ձեզ...

Եւ ձեր դահիճն է — դարձեալ նոյնը, Կարմի՜ր, Կարմի՜ր Դահճապետը:

ՎԱՏԵՐ.

Ներքև մենք զետեղում ենք նշանաւոր դաւաճան Արփիար Արփիարեանի ոչ պակաս նշանաւոր „Մեղայագիրը“, որ զետեղված էր „Արևելքի“ 1891 թ. 2098-դ համարում: Արժէ մի քանի բացատրութիւններ տալ այդ Մեղայագիրը տրված պարագաների մասին. 1890 թ. Թիւրք կառավարութեան կարգադրութեամբ Արփիարեանը գնում է Կովկաս խորէն Նարբէյին լրտեսելու պաշտօնով: Միշտ դառնագղեստ դայլ՝ Արփիարեանը Կովկասում աջողում է մի յայտնի անձնաւորութեան վստահութիւնը գողանալ, որով այդ անձնաւորութիւնը նրան յանձնում է 2,000 ռուբլի, որպէսզի նա բերէ և յանձնէ կ. Պոլսի Հնչակեան Մասնաճիւղին: Այդ դրամը, բնականաբար, կուլ է գնում նոյն իրան Արփիարեանի կոկորդը: Երբ նա ձերբակալվում է, այդ դէպքերից յետոյ, երկու-երեք ամիս բանտում մնալով, նրա ամենամեծ քաջութիւնը նրանում է կայանում, որ անամօթ կերպով շարունակ լալիս է և Նազըմից փրկութիւն աղերսում: Նազըմն իսկ զզուանք զգալով Արփիարեանի լալկանութիւնից, իր ոստիկանական ճարպիկ հոտառութեամբ անմիջապէս դուշակում է, որ յանձին Արփիարեանի „օգտակար“ որս էր կոցահարել, և յայտնում է Արփիարեանին նրա արձակման պայմանները... այն է մատնիչի ու դաւաճանի դեր ստանձնել և „ի վերայ այսր ամենայնի“ Արփիարեանի ամենամօտ ազգականներից մէկին զոհաբերել Նազըմի անկողնուն... Սակարկութիւնը դժուարութեան չէ հանդիպում. մի շարք յայտնութիւնների հետ Արփիարեանն այդ ժամանակ ամբաստանում է, իբրև յեղափոխականներ, Խորէն Նարբէյին, Վահրամ Բէյ Տատեանին, Դօքտօր Թիրիաքեանին, որոնք էլ ձերբակալվելով՝ առաջինը թունաւորվում է սուլթանի կառավարութեան կողմից, իսկ երկու վերջինները բանտերում ամեն տանջանք կրելուց յետ՝ հազիւ կարողանում են իրանց ազատել մահից: Արփիարեանն արժանանում է դրամական վարձատրութեան և բանտից արձակվելուն, բայց դա՛ այնպիսի պարագաներում, որ հայ հասարակութիւնը կասկած չը տանէ նրա վատութեան մասին, և ապա գաղտնի խոստում է տալիս իր սկսած „հաւատարիմ ծառայի“ դերը շարունակելու: Բանտից դուրս գալուն պէս նա իր „հրապարագրական գրչով“ ստեղծագործում է այդ գրական կտորը, „Մեղայագիրը“, բարոյական անկման այդ ամենաստոր ու ամենափայլուն արտայայտութիւնը, այդ ամենաաղտոտ հայելին, որ միակ ինքն ըստ ինքեան Արփիարեանի բարոյական մահի ղողանջն է: Բայց այդ „Մեղայագիրն“ էլ ունի իր պարագաները: Արփիարեանն այդ ժամանակ անդամ էր „Արեւելքի“ խմբագրութեան, որից ծածուկ հրատարակել նախ փորձեց իր Մեղայագիրը նոյն „Արևելքում“, սակայն չաջողեցաւ: „Արևելքի“ խմբագրութիւնն ընդդիմացաւ Մեղայագիրը իր թերթում զետեղելուն: Այդտեղ Վատը հասկանալի կերպով ազդարարում է, թէ եթէ իր պահանջը չը կատարվէ՝ „Արևելքի“ խմբագրութիւնը „ծանրապէս կը տուժէ“... Եւ Մեղայագիրը լոյս է տեսնում „Արևելքում“: Բայց այդ թերթի խմբագրութիւնն այդպիսի ամօթից յետոյ հարկ է տեսնում Արփիարեանին արտաքսել իր, այսինքն խմբագրութեան անդամակցութիւնից: Սակայն Արփիարեանն այդտեղ մխիթարվում է նրանով, որ իր Մեղայագիրը տպագրված՝ „Արևելքի“ համարն անմիջապէս տանում է այլ եւս իր պետը ու հրամայողը դարձած Նազըմին, որից էլ անմիջապէս ստանում է հարիւր մէճիտ վարձատրութիւն և բացառիկ իրաւունք՝ իր ամեն ցանկացած ժամանակը ճաշի կամ ընթրիքի յաճախելու Նազըմի տունը և նրա հետ „խօսակցելու“: Ինչպէս հաւատացեալը մզկիթ է յաճախում, նոյնպէս և Արփիարեանը Նազըմի մօտ էր գնում շարունակ: 1895 թուի ամառը, հակառակ Հնչակեան կուսակցութեան կենտրօնի խիստ բողոքներին, իր արբանեակների միջոցով նա աջողում է ներս է սպրդել կ. Պոլսի Հնչակեան Մասնաճիւղի մէջ. նա շարունակում է „ծառայել“ Նազըմին և ապա դրա գաղտնի թելադրութեամբ ու օգնութեամբ, ըստկրսում է, հակառակ Հնչ. կ.-թեան կենտրօնի ամեն արգելքներին, սպառնալիքներով ու սպաննութիւններով կողոպտել տալ հայերին, սպանել է տալիս Գարակէօզեանին, մինչև որ աջողում է շորթել տասնեակ ու տասնեակ հազար ոսկի, միշտ ազգի և յեղափոխութեան քօղի տակ: Այդ ահագին գումարի մի բաժինն ընկնելով իր պետ Նազըմին, միւս բաժինն է, որ



Face et pile de la médaille.—

Մետալին երկու երեսները.—

„ԱՊՏԱԿ"-ի Հանելուկներ

Ռէպուս թիւ 11



Թիւ 10 Ռէպուսի լուծումը

—Մահէկ, Հ-Այ-ըմ-եկ կըռէ ։ Մարդկութ-իւն-ը-բու-ճ-կտաւ-մէ-կ, Ռուս-ը-մ-եկ-պի-տի կտրատէ և թաքաւոր-ուտ իւն-դպի-թի-կ-որ ան-էու-գար գա-ր ի վրայ-էպի-թի-մնա-գօ-երկրի մէջ-այս-բէ-սկը-սէ-ե-հօ-վա։—

—Մահէկ, Հայը գեկ կըռէց, Մարդկութիւնը բուճ կտաւ գէց, Ռուսը գեկ պիտի կտրատէ և թաքաւորուտ-իւնդ պիթի կործանէ ու գար գարի վրայ էպիթի մնա գօ երկրի մէջ այս-բէս կըսէ ԵՅՈՎԱ։—

—Մահէկ, Հայը գեկ կըռէց, Մարդկութիւնը փուջ գտաւ գէց։ Ռուսը գեկ պիտի կտրատէ և թաքաւորուտ-թիւնդ պիտի կործանէ ու գար գարի վրայ էպիտի մնա գօ երկրի մէջ այսպէս կըսէ ԵՅՈՎԱ։—

հանգիստ կերպով վայելեց և վայելում է Ալ-ֆարական խմբակի այդ Մէսսիան, Ռշտունիներ-ի, Տամատեաններ-ի, Սըվազլիներ-ի, Աղասիներ-ի այդ արժանաւոր պետն՝ իր բոլոր մեծ ու մանր արբանեակներով։

Ահա Մեղայագիրը, Արփիարեանի փառքի այդ ինքնագործ անմահ արձանը. —

ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ

ԱՌ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆՆ

Օսմանեան կայսրութեան ժողովուրդներէն ոչ միայն բարոյական կեանքն այնքան զօրեղապէս հիմնուած է աւանդութիւններու վրայ որքան Հայ Ազգինը։

Խուժդուժ ժողովուրդներ մահուան դուռն էին բերած հասուցած Հայ ազգն, երբ Օսմանեան դրօշակն իւր ծալքերուն ներքև պաշտպանեց այդ ժողովուրդը, և հնարաւոր ընծայեց նմա հանգիստ շնչել ու ապրիլ։

Հինգ դարեր անցած են այդ օրէն ի վեր և Հայ ազգին աւանդութիւնն եղաւ այդ հինգ դարերու մէջ թէ՝ Օսմանցին գթած է և Հայն այդ գթութեան շուքին ներքև կը հանգչի։

Այդ աւանդական ԳԹԱՌՈՒԱՑՈՒԹԻՒՆԸ կը մարմնանայ յանձին Վեհ. Սուլթան Համիտ Կայսեր։

Տան և հինգ տարիներէ ի վեր Օսմանեան Կայսրութեան ամէն անկիւններէն ամէն օր տառապեալներու, թշուառներու, տարաբաղդներու օրհնութիւններ վասն Վեհափառ Սուլթան Համիտի՝ ներդաշնակութիւն մը կազմելով կը բարձրանան յոտս գահոյից Աստուծոյ. զի ուր որ թշուառ մը կայ, ուր որ արցունք մը կը թափի, հոն Վեհ. Սուլթան Համիտէն մխիթարութիւն մը կայ։

Եթէ տիեզերք համօրէն կ'սքանչանայ Նորին Վեհափառութեան իմաստութեան վրայ, կը յուզուի կը խանդաղատի նաև Նորա անսահման գթասրտութեանը համար։ Այնպէս որ կրնանք ըսել թէ՝ երբ Նախախնամութիւնը պարգևեց օսմանեան երկրին զՍուլթան Համիտ՝ Նորա ծնած օրն եթէ Աստուած մատը Նորա ճակտին դնելով իմաստութիւն պարգևեց, խրկեց նաև երկու հրեշտակներ՝ Գթութեան ու Բարութեան հրեշտակներն, հսկել Նորա օրօրոցի մօտ։

Օսմանեան կայսրութեան համար երջանկութեան օր մը եղաւ այն օրն ուր այդ իմաստութեամբ սնած գլուխն, Բարութեան ու Գըթութեան հրեշտակներու հովանւոյն ներքև ուռճացած այդ սիրան, Օսմանեան կայսրութեան տէրն եղաւ։

Վ. Եհ. Սուլթան Համիտի գահակալութեան բարեբաստիկ օրէն ի վեր նոր դարագլուխ մը բացուած է օսմանեան կայսրութեան համար որու ժողովուրդներն երբ կը յիշատակեն Վ. Եհ. Սուլթան Համիտի անունը կը բաւականանան ըսելով, „ՄԵՐ ՀԱՅՐԸ“։

Այդ ՄԵՐ ՀԱՆՐՆ էր որ Իւր գորովալիր սրտովն Յունվար 5-ի իրիկունն յիշեց Իւր Հայ զաւակներն ալ։

—Ներեցի, մի լաք, և խնդացէք, ըսաւ։

Այդ հայրագորով „Ներեցի“ բառին բոլոր քաղցրութիւնը, բոլոր հրապոյրը բանտարկեալի մը չափ ոչ ոք կրնայ զգալ. ապաքէն կայսերական այդ վեհանձն ներողամտութեամբ եթէ ընդհանուր Հայ ազգը Յունուար 5-ի օրը խորին երախտագիտութեան նոր պարտականութիւն մը ևս ունեցաւ առ Վեհափառ Սուլթան Համիտ Կայսրը առատագութ, Հայ ազգին մէջ անոնք որք Խթումի գիշերը արձակուելով բանտէն, վերադարձան իրենց սիրելիներու մօտ, բնականաբար անոնց երախտապարտութիւնն առ Վեհափառ Կայսրն կրկնակի է և անսահման։

Եւ ևս, որ այդ գիշերը միայնակ բանտին մէջ անցուցի՝ ալ բոլորովին յուսահատուած ապագայէն, ի՞նչ բացատրութիւն կարենամ գտնել հրապարակաւ թարգմանելու համար յուզեալ սրտիս երախտագիտութիւնն առ գըթալիր Կայսրն մեր որ յաջորդ գիշերը կը հաճէր շնորհել ինձ կեանքս ու ազատութիւնս։

Տարօրինակ զուգադիպութիւններ զիս մեղապարտ կը հանդիսացնէին հանդէպ անողոքելի օրինաց, սակայն Վեհափառ Սուլթան Համիտ Կայսեր միտքը գեր ի վերոյ է ամեն օրէնք։ Գրականութեան պաշտպան Կայսրն գիտէ թէ՝ Իւր Տէրութեան մէջ չկրնար գտնուիլ գրագէտ մը որ մեղապարտ խորհուրդ մը սնուցանէ մտքին մէջ Օսմանեան կայսրութեան հանդէպ։ Վեհափառ Սուլթանը թոյլ չ'տուաւ ապաքէն որ օրէնքն անողոքելի՝ ընչէ վերցնէ հրապարակէն գրական համեստ աշխատաւոր մը։

Կեանքս Վեհափառ Սուլթանին պարտական եմ, և որքան ապրիմ՝ իմ բոլոր աշխատութիւններս պիտի կայանան միշտ հանդիսանալ մեր առատագութ Կայսեր Վեհանձն զգացումներուն ու խորին իմաստութեան քարոզիչն ամեն դասակարգերու մէջ։

Մենք, արդի հայերս, մեր հայրերէն շատ աւելի բարեբաղդ ենք, վասն զի կ'ապրինք այնպիսի Կայսեր մը օրով Որուն իմաստութիւնը կ'ապշեցընէ եւրոպական իմաստութիւնը, որուն գթասրտութիւնն Իւր անձնուէր գերին կ'ընէ ամեն կարգի հպատակները։ Իմաստութիւն և գթասրտութիւն երբ կը միանան յանձին մի Կայսեր, հրաշքներ գործել կուտան։ Մենք հայերս ալ պէտք է այդ իմաստութեան ու գթառատութեան անարժան չգտնուինք որպէս զի շարունակենք ըլլալ այնքան երջանիկ որ ուրիշ երկիրներու հայերը նախանձաւոր ըլլան մեզ։

Արդէն յունվար 5-ի կայսերական շնորհը կը բաւէ այդ նախանձն յառաջ բերելու։ Այն կասկածներ ու ամբաստանութիւններ որք կը ծանրանային հայ բանտարկելոց վրայ. եթէ պատահէին ուրիշ աշխարհի մէջ՝ այդպիսի՛ք երբէք ազատ չէին մնար օրինաց խստութիւններէ։

Ուրեմն գիտնանք մեր Օգոստափառ Վեհապետին հայրական գթասրտութեան և անզուգական վեհանձնութեան թանկագին արժէքը։ Մեր սիրտը, մեր կեանքը Վեհափառ կայսեր նուիրուած մնան միշտ և երբէք ոչ ոք մենք ամենափոքր պղտորութեամբ մը ցաւ պատճառէ մեր գթառատ Տէր փափուկ սրտին։

Ն. Ա. Վեհափառութեան
ամենախոնարհ և երախտագէտ
ծառայ
ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ.

Եւ այդ աղբը միակ օրինակը չէ։ Միհրան Տամատեան կոչված Արփիարեանի գլխաւոր արբանեակը փորձեց իր պետից յետ չը մնալ։ Շերբակալվելով Սասունում, մէկ ամիս չանցած, Բիթլիսի վալիի միջոցով նա նոյնօրինակ մեղայագիր գրեց, խոստացաւ սուլթանին „կարևոր գաղտնիքներ“ յայտնել, եթէ ինքը տարվէ Կ. Պոլիս, ինչ էլ եղաւ սուլթանի յատուկ հրամանով։ Եւ երբ Կ. Պոլիս բերվեց՝ նա կրկնեց ու կրկնեց իր մեղայագիրը, ինչ-ինչ ամբաստանութիւններ բարդեց աջ ու ձախ և նողկանք ազդող արցունքով ներողութիւն հայցեց արիւնարբու սուլթանից, „հաւատարիմ ծառայ“ լինելու իր խոստումը տալով։ Այդ ստորաքարշ ընթացքի շնորհով Տամատեանն արժանացաւ „ժամանաւոր ներման“, ըստացաւ դրամական միանուագ վարձատրութիւն սուլթանից, ապա նշանակվեց գրագրի ու թարգմանի թոշակաւոր պաշտօնով թիւրքական չարադատութեան վարչութեան մէջ։ Այդ թոշակը նա ստանում էր կանոնաւորապէս, և փոխադարձը ժամուցանում էր իր „վեհափառին“ „հաւատարիմ ծառայութիւններով։“

Ահա Արփիարեան-Տամատեան խմբակի բարոյական իսկական նկարագիրը։

Եւ զինված այդպիսի զէնքով՝ սուլթանի ոտքերը լզող այդ արարածները, դիմակ հագած փորձեցին աւազակային ճարպիկութեամբ գողանալ, իրանց մենաշնորհը դարձնել յեղափոխութիւնը, գողանալ „Հնչակ“ թերթը, գողանալ Հնչակ անունը, գողանալ Հնչակեան կուսակցութիւնը, այն է՝ գողանալ այդ կուսակցութեան պատկանող այն մարդկանց, որոնք այնքան միամիտ ու տխմար կը գտնէին, որ կը խաբվէին Արփիարեան-Տամատեանների դիմակից։ Եւ իրանց այդ ստոր գերն աջողութեամբ պսակելու համար, աւելի արդիւնաւոր կերպով շահագործելու համար միամիտ խաբվածներին, նրանք սկսան զզուելի զրպարտութիւններ թափել ուրիշների վրայ, դրամական խնդիրներ յարուցանել՝ արփիարական տասնեակ ու տասնեակ հազար ոսկիների գողութիւնները ծածկելու համար, ուրիշներին տխմարաբար ամբաստանել միապետական ընթացքի մէջ, այդպիսով ստոր գայթակղութիւն սերմանելու համար հայոց մէջ, մինչդեռ իրանք թէ հրապարակապէս և թէ գաղտնի հայասպան արիւնախում միապետի, իրանց Վեհապետ սուլթանի ոտքերը լզողներն են։ Բայց այդ գարշատիպ Արփիարեանների այդպիսի ընթացքն ունի իր համապատասխան արժանաւոր հետևանքը, և միւս կողմից էլ չը կարծեն թէ հանգիստ կերպով կը մարսեն նրանք տասնեակ հազարաւոր ոսկիները, որ աւազակութեամբ նրանք շորթել են հայ հասարակութիւնից, ոսկիներ, որոնք հայ ժողովրդի արեան գինն են։

Ընթերցող, ցաւում ենք, որ ստիպված ենք այդպիսի անձերով այսօր զբաղեցնել քեզ։ Բայց կան թուքեր, որ կոկորդում պահել վատանգաւոր է. պէտք է նրանց փսխել դուրս... և ապա անցնել առաջ։

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

Բօ, ա՜հ, տա՜... այս ի՞նչ է... ամբողջ տիեզերքը շարժման մէջ... Արևելք, արևմուտք, հիւսիս, հարաւ... ամեն կողմ իրարանցում, ընդհարում... ինչ որ արտասովոր բան է յայտնվել տիեզերքի վրայ... Արևը, լուսինը, մոլորակները, աստղերը, մի խօսքով ամեն տեսանելի ու անտեսանելի, յայտնի ու անյայտ մարմինները, եւ ապա Եւրոպան, այո՛, Եւրոպան, նաև Ասիան, Ամերիկան, Աֆրիկան, Աւստրալիան... ամեն տեղ, ամե՛ն տեղ ապրող ու շնչող, ասուն թէ անասուն անաւոր պատրաստութիւնների մէջ են, մեծամեծ քանակցութիւններ ունին իրար հետ՝ գիշերը ցերեկի խառնած, ցերեկը՝ գիշերի, եւ միացած են, միացած եւ վերջնական մի որոշման համաձայն պէտք է բարձրացնեն ի՞նչ... „հայրից“ հարցրէք, աշխարհիս մարգարէութեան այդ նորագոյն էֆէմէրիդը... ի՞նչ ի՞նչ պէտք է բարձրացնեն տուտով... „հայը“ որ սիրում է բարձրից սաւառնել եւ քիշով չի ուզում բաւականանալ, հաղորդում է մեզ, որ իր նախակրութեամբ պէտք է բարձրացնեն... „Տիեզերական ապստամբութիւն“։ Ապստամբապետն է, բնականաբար, „հայրի“ խմբագիր Dr. Gabriel...

Եթէ ասածներիս չես հաւատում՝ „հայը կարդա։
Եթէ ամենագէտ լինել կուզես՝ „հայը“ կարդա։
Եթէ անգլերէն սովորել կուզես՝ „հայը“ կարդա։
Եթէ շատ խօսել եւ ոչինչ ասել կուզես՝ „հայը“ կարդա։
Եթէ ապստամբագլուխ լինել կուզես՝ „հայը“ կարդա։
Եթէ խելքի աղքատ լինել կուզես՝ „հայը“ կարդա։
Եթէ հայերէնդ մոռնալ կուզես՝ „հայը“ կարդա։
Եթէ բոլոր իմացածդ էլ մոռնալ ուզես „հայը“ կարդա։

Ասածներս կատակ չեն. ինքը „հայրն“ է, որ այդօրինակ յայտարարութիւն է անում իր վերջին համարներից մէկում։ Ասածներս կատակ չեն եւ... Աստուած „հայրին“ խելք բաշխէ, ինչպէս ասում է ժողովուրդը... „հայը“ կարդա եւ կիմանաս, որ իմ՝ այս ասածն էլ կատակ չէ, բնա՛ւ։

ԾԻԾԱՂ.

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ
H. Papagalo-ԷՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Հայաստան.— Տեղ մը ուր ամեն մարդ իրաւունք ունի հաստատուել ի բաց առեալ Հայ՝ը։ Այժմ թուրքերն են որ կը ջարդեն զանոնք. ապագային Ռուսները լինելու են որ պիտի ճնշեն զանոնք։

Դարդանել.— Ծով մը որի մէջ ձուկերը թորփիլներ են, ոստրէները ռումբեր են, թրաձուկները ուլիներ են, եղերքները վառօթ են։ Այլ սակայն շատ մարդիկ փափաք ունին երթալ շրջագայելու այնտեղ։

Սև-ծով.— Ծով մը որի մէջ միայն թուրքը, Ռուսը, Աւստրիացին և Բուլղարը կրնան լուացուիլ։ Բայց առաջին երեքը փոխանակ մաքրուելու միշտ աւելի ու աւելի կ'աղտոտուին հոն և ի վերջոյ այդ ծովին պէս պիտի սևանան։

Հիւսիս.— Երկրիս ամենախաւար ծագը. այլ սակայն այդ այն կողմն է ուրտեղէն Ֆըրանսացիք կ'ակնկալեն լոյսը... ռուսը։

Արևելք.— Այն տեղը, ուր արեգակը յարութիւն կ'առնէ և ուր պիտի տեսնենք կիսալուսնի շինջանելը։

ԼՕՆԴՕՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.